2026-2028թթ. ՄԺԾԾ և ՀՀ 2026թ. պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում

Ապրիլի 2-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում տեղի ունեցավ հանրային քննարկում մարզպետի աշխատակազմի կողմից կազմված <<Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման>> 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի /ՄԺԾԾ/ , ներառյալ 2026թ պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ:

Հանրային քննարկմանը մասնակցում էին մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանը, ֆինանսական վարչության պետ, փորձագետ Գվիտոն Դավթյանը, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների անդամներ:

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, ողջունելով հյուրերին, շնորհակալություն հայտնեց նրանց հանրային քննարկմանը մասնակցելու պատրաստակամության համար, ապա նշեց, որ ընթացակարգի համաձայն՝ անհրաժեշտ է ապահովել համապատասխան քննարկում՝ առաջնորդվելով հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքներով և դիտարկել համապատասխան առաջարկները:

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ, փորձագետ Գվիտոն Դավթյանը հանգամանալից ներկայացրեց 2026թ. պահպանման ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման և հաշվարկ-հիմնավորումների, ինչպես նաև 2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

Այնուհետև ծավալվեց քննարկում. մասնակիցները բյուջետային հայտերի վերաբերյալ զեկուցողին ուղղեցին հարցեր նախատեսված ծախսերի ուղղությունների և հիմնավորումների վերաբերյալ , ստացան պարզաբանումներ: Զեկուցվող թեմայի առնչությամբ գրավոր առաջարկներ և դիտողություններ չեղան: